ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«14» սեպտեմբերի 2017 թվականի № 111-Հ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին՝ մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի օգոստոսի 09-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-69 և 2017 թվականի հունիսի 20-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 1275 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի օգոստոսի 29-ի թիվ Ֆ-250/17 գրությունը, «ԿԱՐՄԻՐ ՏՈՒՖ» ՍՊԸ-ի 2017 թվականի մայիսի 20-ի թիվ 21 դիմումը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԿԱՐՄԻՐ ՏՈՒՖ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 26 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/566 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդակերտի տուֆերի հանքավայրի թիվ 7 տեղամասի 3-Բ և 4-Բ բլոկների՝ համապատասխանաբար 1.X=4442038 Y=8392154, 2. X=4442056 Y=8392227, 3.X=4442073 Y=8392217, 4. X=4442077 Y=8392254, 5.X=4442218 Y=8392201, 6.X=4442326 Y=8392211, 7.X=4442326 Y=8392100, 8. X=4442217 Y=8392088, 9.X=4442124 Y=8392123 և 1.X=4442951 Y=8392160, 2. X=4442951 Y=8392345, 3. X=4443211 Y=8392354, 4. X=4443214 Y=8392342, 5.X=4443224 Y=8392331, 6.X=4443197 Y=8392268, 7.X=4443165 Y=8392256, 8. X=4443160 Y=8392248, 9.X=4443163 Y=8392243, 10.X=4443187 Y=8392246, 11.X=4443143 Y=8392193 (տրված են՝ WGS-84 (Վի Ջի Էս-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 62400 մ^3 և 78500 մ^3 տուֆ, լեռնահատկացման թիվ L-566 ակտը՝ համապատասխանաբար 1.X=4442016 Y=8392143, 2.X=4442016 Y=8392169, 3.X=4442032 Y=8392209, 4.X=4442056 Y=8392227, 5.X=4442056 Y=8392288, 6.X=4442116 Y=8392293, 7.X=4442210 Y=8392240, 8.X=4442250 Y=8392251, 9. X=4442320 Y=8392259, 10. X=4442331 Y=8392217, 11. X=4442331 Y=8392083, 12.X=4442216 Y=8392071

և 1.X=4442945 Y=8392155, 2.X=4442945 Y=8392395, 3.X=4443200 Y=8392400, 4.X=4443252 Y=8392392, 5.X=4443258 Y=8392359, 6.X=4443194 Y=8392203, 7.X=4443146 Y=8392188 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 5.1 հա և 6.2 հա տարածքներով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 3-Բ բլոկից՝ 2390 մ^3, 4-Բ բլոկից՝ 3000 մ^3 :

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդակերտի տուֆերի հանքավայրի թիվ 7 տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-566 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն, օգտակար հանածոների արդյունահանման պայմանագիր, լեռնահատկացման ակտ),

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ